



ԵՐԱՌԵՐԹԻ, 28 ՍԵՊՏԵՄԲԵՐ, 2020

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս եմ. ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՐՄՈՍ 23

ՏԵՐՆ Է ՀՈՎԻԻՍ

Տէրը իմ հովիւս է.

ես բանի մը կարօտութիւն պիտի չունենամ:

Զիս խոտաւէտ արօտներու մէջ կը պառկեցնէ,

հանդարտ ջուրերու խով ինձի կ'առաջնորդէ: Հոգիս կը նորոգէ:

Իր անուանը համար արդարութեան նամբաներու մէջ

կ'առաջնորդէ ինձի:

Թէեւ մահուան շուֆի ձորին մէջ ալ պտըտիմ,

չարէն պիտի չվախնամ,

որովհետեւ դուն ինձի հետ ես,

քու ցուպդ ու գաւազանդ՝

անոնք զիս կը միփթարեն:

Սեղան կը պատրաստես իմ առջեւս իմ թշնամիներուս դիմաց.

իմ գլուխս իւղով կ'օծես, իմ բաժակս խիստ լեցուն է:

Յիրաւի բարեբարութիւնն ու ողորմութիւնը ինձի հետ պիտի ըլլան:

Կեանքիս բոլոր օրերուն մէջ, ու շատ օրեր

Տիրոջ տունը պիտի բնակիմ:

ՇԱՐԱԿԱՆ-ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Ամենատարբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէրոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղէրոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,

Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նաւապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՝ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

ՕՐՈՒՄՆ ՆԻԺՈՐ



ԴԱՆԻԷԼԻ ՄԱՐԳԱՐԵՈՒԹԻՒՆ

2:12-23 ԳԼԽ

ՆԱԲՈՒԳՈՂՈՍՈՐԻՆ ԵՐԱՋՐ

Պօղոս Առաքեալ ճիշդ ձեռով կը ներկայացնէ երբ կ'ըսէ. «Ոչ որ կրնայ գիտնալ Աստուծոյ խորհուրդները, եթէ ոչ Աստուծոյ Հոգին» Ա Կորնթ 2:11: Այո, Աստուծոյ խորհուրդները հասկնալու համար Աստուծոյ Հոգին պէտք է ունենալ: Այս նոյն հասկացողութեամբ ալ Դանիէլ յանձն կ'առնէ միջամտելու եւ թագաւորին երագը եւ պարսկերէն եւ անոր բացատրութիւն փալու, միշտ ապաւինելով Աստուծոյ:

Հարուածը կ'ըսէ այսպէս. «Դանիէլ իմաստութեամբ եւ խոհեմութեամբ խօսեցաւ թագաւորին դահճապետին հետ» 14 հմբ: Թագաւորէն կը խնդրէ ժամանակ, որպէսզի այդ երագին բացատրութիւնը փայ: Կը խնդրէ ժամանակ, որպէսզի իր ընկերներուն պարմէ: Կը խնդրէ ժամանակ, որպէսզի Աստուծոյ աղօթէ եւ Աստուծմէ խնդրէ իմաստութիւն: Ուրեմն որքան կարեւոր է ժամանակ հասկացողութիւնը: Յաճախ կը մոռնանք այս բաժինը, որ ժամանակ փանք նախքան որոշում առնելը, նախքան պարասխան փալը: Առաւել եւս ժամանակ փանք աղօթքի նուիրուելու, որպէսզի Աստուած Ինք առաջնորդէ, իմաստութիւնը փայ ըստ այնմ ճիշդ կողմնորոշուելու:

Դանիէլ իր ընկերներուն կը պարմէ ու անոնց հետ աղօթքի կը նուիրուի: Այս երեւոյթը ցոյց կու տայ հաւաքական կեանքի ու հաւաքական աղօթքի կարեւորութիւնը, անհրաժեշտութիւնը, ու անոր արդիւնքը: Ամենակարեւորը. «Աստուծոյ գթութիւնը խնդրեն, որպէսզի Դանիէլն ու անոր ընկերները Բաբելոնի միւս իմաստուններուն հետ չկորսուին» 18 հմբ: Դանիէլ պարզապէս չ'աղօթէր որ պարասխան մը ունենայ, այլ կ'աղօթէ որպէսզի Աստուած ողորմի ու Իր գութը յայտնէ, որպէսզի չկորսուին:

Աստուած Իր պարասխանը կու տայ գիշերուան քնիւքի ճամբով: Աստուած փարբեր փարբեր կերպեր կ'օգտագործէ Իր պարասխանը փալու: Անոր համար ալ մենք պէտք է որ պարասխան ըլլանք այդ պարասխաններուն: Որովհետեւ յաճախ երբ կը խնդրենք Աստուծմէ, նաեւ պարասխան մը ունենալու սպասումը ունինք, բայց հարցը այն է, թէ ինչպիսի պարասխանի կը սպասենք: Անոր համար ալ Աստուած առիթով մը Եսայի մարգարէին պիտի ըսէ. «Իմ խորհուրդներս ձեր խորհուրդները չեն: Իմ ճամբաներս ձեր ճամբաները չեն» 55:8: Աստուծոյ գործելակերպը փարբեր է քան մեր մարդկային գործելակերպը: Անոր համար ալ յաճախ շար մը բաներ որոնք փարօրինակ կը թուին մեզի համար, բայց արիկա Աստուծոյ համար երբեք ալ փարօրինակ չէ: Ահա թէ ինչու իմաստութիւն կը խնդրենք, որպէսզի ճիշդ ձեռով հասկնանք Աստուծոյ խորհուրդները, Աստուծոյ գործելակերպը եւ Աստուծոյ փութ պարասխանը:

Դանիէլ անմիջապէս որ կը սրանայ պարասխանը առաջին իսկ առիթով զԱստուած կ'օրհնէ ըսելով. «Աստուծոյ անունը յափտեալ յափտենից օրհնեալ ըլլայ, որովհետեւ իմաստութիւնն ու գօրութիւնը Անորն են: Արեւներն ու ժամանակները փոխողը, թագաւորներ վերցնողն ու թագաւորները հաստատողը անիկա է: Անիկա իմաստուններուն իմաստութիւն կու տայ ու հանճարեղեններուն՝ գիտութիւն: Խորունկ ու ծածկուած բաները Ինք կը յայտնէ, մութի մէջ եղածը գիտէ ու լոյսը Անոր քով կը բնակի» 20-22 հմբ: Այսինքն՝ չկայ ծածուկ բան մը որ յայտնի չըլլայ Աստուծոյ մօտ: Ահա Դանիէլ երախտագիտութեան ոգիով շնորհակալութիւն կը յայտնէ Աստուծոյ, որ իրեն իմաստութիւն ու գօրութիւն փութ, եւ գիտցուց ինչ որ Աստուծմէ խնդրեցին: Ի վերջոյ, այս բոլորի գախարհիքը այն է, որ Դանիէլ խոնարհութեամբ մօտեցաւ, սորվելու մտադրութեամբ մօտեցաւ: Չխնդրեց, որպէսզի յետոյ ամէն ինչ իրեն վերագրէ: Այլ միշտ խոստովանելով ու դաւանելով թէ այս բոլորի երին Աստուծոյ մաքր կայ, այս բոլորին փրկեալ Աստուած Ինք է, այս Ինք իսկ է փութը ամէն իմաստութեան եւ գիտութեան:

Այսօրուան սորվելիք դասը մեզի համար, այն է.

1. Աստուած է Տէրը ամէն ինչին:
2. Աստուած է աղբիւրը ամէն իմաստութեան ու գիտութեան:
3. Երբ կը խնդրենք Աստուծմէ ամբողջական վարահութեամբ խնդրենք, խոնարհութեամբ խնդրենք, պարասխան ըլլանք ընդունելու ինչ որ պիտի յայտնէ:
4. Չմոռնանք մեր շնորհակալութիւնը յայտնելու Աստուծոյ եւ զգուշ ըլլանք որ մեր ունեցած իմաստութիւնը Աստուածապար շնորհք է փրութեան նպարակի մը համար: Ուստի Իրեն փրութեան փառքը մերը չնկարենք: